Պրոլետարներ բոլոր երկրների, միացե՛ք

ԿՈՎԿԱՍԻ ՍՊԱՌԿՈՈՊԵՐԱՑԻԱՅԻ ԱՇԽԱՏՈՂ-
ՆԵՐԻ ԱՐՀՄԻՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

# ՍՊԱՌԿՈՈՊԵՐԱՑԻԱՅԻ ԱՌԵՎՏՐԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՐՁԱՏՐՈՒՄԸ

## (ԳՅՈՒՂԿՈՈՊԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ)

ՀԱՅԿՈՈՊԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1939

3 1 JAN 2018

Խմբագիր՝ Կ. ՍԱՐԱՖՅԱՆ
Թարգմ. Պ. ՇԻՆԴՅԱՆ
Տեխ. խմբ. Խ. ԽԱՉԱՏՐՅԱՆ
Սրբագրիչ՝ Կ. ՊԵՏՐՈՍՅԱՆ
Գլավլիտի լիազոր՝ Կ.—2486 Պատվեր № 156, Տիրաժ 3500
Հանձնված է արտադրության 4 ապրիլի 1939 թ.
Ստորագրված է տպագրելու 9 ապրիլի 1939 թ.

Մանկավարժական ինստիտուտի տպարան, Մարքսի փող. № 17, Երևան

# ՏԱՐԻՖԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

## ԽՍՀՄ ՅԵՎ ՌՍՖՍՀ ՑԵՆՏՐՈՍՈՅՈՒԶԻ ՅԵՎ ԿԵՆՏՐՈՆԻ, ՈՒԿՐԱՅԻՆԱՅԻ, ԿՈՎԿԱՍԻ, ԱՐԵՎԵԼՔԻ, ՍԻԲԻՐԻ ՅԵՎ ՈՒՐԱԼԻ ՍՊԱՌԿՈՈՊԵՐԱՑԻԱՅԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԱՐՀՄԻՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՆԵՐԻ:

Գյուղկոոպների, շրջկոոպների, քաղկոոպների յեվ բանկոոպների, ինչպես նայեվ սպառկոոպմիությունների շրջանային (օկրուգային) մագազինների առեվտրական աշխատողների աշխատանքի վարձատրության կարգի յեվ չափերի մասին:

*1939 թվի փետրվարի 1-ից գյուղկոոպների, շրջկոոպների, քաղկոոպների, բանկոոպների և սպառկոոպմիության շրջանային (օկրուգային) մագազինների առևտրական աշխատողների աշխատանքի վարձատրության համար սահմանել հետևյալ կարգը և չափերը.*

### I. Մագազինների յեվ խանութների աշխատողների աշխատանքի վարձատրությունը

*1. Սահմանել բոլոր խանութների ու մագազինների աշխատողների համար պրոգրեսիվ գործարքային վարձատրություն, պլանի սահմաններում կատարված յուրաքանչյուր հազար ռուբլի շրջանառության համար, վարձամիավորների* (расценок) *սահմանված չափով, իսկ պլանից ավելի կատարված յուրաքանչյուր հազար ռուբլի շրջանառության համար՝ վարձամիավորների բարձրացրած չափով:*

2. Բոլոր խանութներում ու մագազիններում (բացի 3 և 4 կետերում թվարկվածներից) վաճառողները, ինչպես նաև խանութների ու մագազինների այն վարիչները, վորոնք միաժամանակ կատարում են վաճառողի ֆունկցիա, վարձատրվում են միասնական վարձամիավորով՝ տվյալ խանութների ու մագազինների համար հաստատված պլանի սահմաններում կատարված յուրաքանչյուր հազար ռուբլի շրջանառության համար 10 ռ., իսկ պլանից ավելի կատարված յուրաքանչյուր հազար ռուբլի շրջանառության համար՝ 12 ռուբլի։

3. Հատուկ բաժիններ չունեցող սելմագներում և ռայմագներում, վաճառողները, ինչպես նաև այն վարիչները, վորոնք միաժամանակ կատարում են վաճառողի ֆունկցիա, վարձատրվում են միասնական վարձամիավորով, մագազինի համար հաստատված պլանի սահմաններում կատարված յուրաքանչյուր հազար ռուբլի շրջանառության համար 9 ռուբլի, իսկ պլանից ավելի կատարված յուրաքանչյուր հազար ռուբլի շրջանառության համար՝ 11 ռուբլի։

4. Շրջանային այն ունիվերսալ մագազիններում, խոշոր սելմագներում, պրոդմագներում և կուլտմագներում, վորոնք մարզային (յերկրային) սպառկոոպմիությունների և սպառկոոպերացիայի աշխատավորների արհմիության մարզային (յերկրային) կոմիտեների կողմից հաստատված ցուցակի համաձայն ունեն հատուկ բաժիններ, վաճառողի համար սահմանել շերտավորված (դիֆերենցիալ) վարձատրություն, այն է՝ վաճառված

| | Հազ. ռուբլի շրջանառությունից |
|---|---|
| ա) մանուֆակտուրայի, պատրաստի հագուստեղենի և տրիկոտաժի համար . . | 4 ռ. 50 կ. |
| բ) կոշկեղենի համար . . . . . . . . . | 6 ռ. 00 կ. |
| գ) գինի-նպարեղենի (գաստրոնոմիական) ապրանքների համար . . . . . . . . . | 8 ռ. |
| դ) գալանտերեա, պարֆյումերիա և հրուշակային արտադրանքի համար . . . . . . . | 18 ռ. |
| յե) գրքերի և խաղալիքների համար . . | 35 ռ.— |
| զ) մնացած բոլոր ապրանքների համար . | 12 ռ.— |

ԱԶԳԱՅԻՆ ... ՀԱՄԱՐ
II-28357գր



Մագազինի բաժնի համար հաստատված շրջանառության պլանը գերակատարելու դեպքում, շերտավորված (դիֆերենցիալ) վարձամիավորը բարձրացվում է պլանից ավելի կատարված յուրաքանչյուր հազար ռուբլի շրջանառության համար 20 %-ով։

5. Խանութների և մագազինների այն վարիչները, վորոնք միաժամանակ կատարում են վաճառողի ֆունկցիա, վարձամիավորով ստանալուց բացի, կառավարելու համար ստանում են ամսական լրացուցիչ վարձատրություն հետևյալ չափերով.—

ա) խանութում ուրիշ վաճառող չլինելու դեպքում . 30 ռ.

բ) մեկ վաճառողի առկայության դեպքում . 70 ռ.

գ) յերկու և ավելի վաճառողների առկայության դեպքում . . . . . 100 ռ.

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Աշակերտները վաճառողների թվում չեն մտնում։

6. Աշխատավարձի հաշվարկումը կատարվում է յուրաքանչյուր ամիս հետևյալ կարգով.

ա) Հատուկ բաժիններ չունեցող խանութներում, սելմագներում, շրջանային մագազիններում (ռայմագներում) և բոլոր այլ մագազիններում փաստացի ամբողջ շրջանառությունը բազմապատկելով հիմնական վարձամիավորով, իսկ պլանից ավել կատարված փաստացի շրջանառությունը վարձամիավորի բարձրացված չափով։

բ) Հատուկ բաժիններ ունեցող մագազիններում՝ առանձին ապրանքային գրուպաների փաստացի շրջանառությունը բազմապատկելով հիմնական դիֆերենցիալ վարձամիավորով, իսկ ամբողջ բաժնի պլանից ավելի կատարված շրջանառությունը վարձամիավորի բարձրացրած չափով, ըստ վորում շրջանառությունը հաշվի յե առնվում հաշվապահական հաշվետվության տվյալներով։

Ըստ առանձին ապրանքային խմբերի ամսական շրջանառության չափը անպայման հաստատվում է ամսական ինվենտարիզացիայի տվյալներով, իսկ այն մագազիններում, վորտեղ ըրենքով ինվենտարիզացիա կատարվում է յեռամսյակում մեկ անգամ, ամսական շրջանառությունը վորոշվում է ոպերատիվ հաշվառման տվյալներով, վորոնք հետագայում հաստատվում են յեռամսյակի վերջում կատարված ինվենտարիզացիայի տվյալներով։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Վարձամիավորի բարձրացված մասի վճարումը յեռամսյակի առաջին յերկու ամսում, կատարվում ե յուրաքանչյուր ամիս, յելնելով յեռամսյակային պլանի 1/3-ի գերակատարումից։

7. Բարձրացված վարձամիավորով աշխատավարձի վերջնական հաշվարկը կատարվում ե, յեռամսյակը վերջանալուց հետո, յեռամսյակային ապրանքաշրջանառության ամբողջ պլանի կատարման չափի վերաբերյալ, հաշվապահական հաշվառման տվյալների հիման վրա, ընդորում այն դեպքում, յերբ յեռամսյակի համար աշխատավորին հասանելիքը ավելի քիչ կլինի, առաջին յերկու ամսում նրան վճարված գումարից, ավելի վճարած գումարը հաշվարկցըվում ե հետագայում աշխատավորին հասանելիք աշխատավարձի դիմաց։

8. Խորքային խանութներին և մանր-մանրածախս ցանցին մանր-մեծաքանակ ապրանքներ բաց թողնելու աշխատանքի համար խանութների, մագազինների աշխատողները ստանում են լրացուցիչ վարձատրություն 1 ռ. 50 կոպեկի չափով, իսկ գրքերի և խաղալիքների համար՝ 3 ռ. 50 կոպեկի չափով, յուրաքանչյուր հազար ռուբլի մանր. մեծաքանակ շրջանառության համար։

9. Բնակչությունից ընդունված և պահեստին հանձնված հացի ողու շշերի արժեքը մտցվում ե մանրածախս շրջանառության մեջ և վճարվում վարձամիավորի սահմանված չափով։

Բացի դրանից, խանութի (մագազինի) աշխատողներին բնակչությունից ամանեղեն ընդունելու աշխատանքի համար վճարվում ե ընդունված ամանեղենի արժեքի յուրաքանչյուր հազար ռուբլու համար 10 ռուբլի։

10. Աշխատավարձի ընդհանուր գումարը, ներառյալ և լրացուցիչ վարձատրությունը (մանր-մեծաքանակ շրջանառության և բնակչությունից գինու շշերն ընդունելու համար) բաշխվում ե աշխատողների միջև հետևյալ կերպ. սկսնակ վաճառողն ստանում ե ընդհանուր գումարից մեկ մաս, յերկրորդ կարգի վաճառողը՝ մեկ և յերեք տասներորդական մաս, առաջին կարգի վաճառողը՝ մեկ և յոթ տասներորդական մաս։



ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—1. Վաճառասեղանի աշխատանքներից չազատված մագազինի վարիչը և խանութի բաժնի վարիչը նկատի յեն առնվում, վորպես առաջին կարգի վաճառողներ, այսինքն մեկ և յոթ տասներորդական մասով։ 2) Այն դեպքերում, յերբ աշխատողները տվյալ ամսում փաստորեն աշխատել են տարբեր քանակի որեր, աշխատավարձի ամբողջ գումարը բաշխվում ե տվյալ խանութի կամ մագազինի աշխատողների մեջ առանձին, ամեն մեկի փաստորեն աշխատած ժամանակի համար։

11. Սահմանել, վոր յուրաքանչյուր մագազինում, վորտեղ աշխատում են յերեք հոգուց ավելի, պետք ե լինի աշակերտ։

Խանութի աշխատողը, վորին ամրացված ե աշակերտ, պրակտիկ ուսուցման կուրսն անցնելու համար, ստանում ե լրացուցիչ վարձատրություն 20-ական ռուբլի աշակերտի պրակտիկ ուսուցման յուրաքանչյուր ամսվա համար և 100 ռուբլի՝ աշակերտի արտադրական ուսուցումն ավարտելուց և քննություն տալուց հետո։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Աշակերտի աշխատավարձը չի մտցվում վաճառողների աշխատավարձի ֆոնդի մեջ։

12. Սահմանել, վոր հանրապետական, յերկրային և մարզային սպառկոոպմիությունների Նախագահությունները, սպառկոոպերացիայի աշխատավորների արհմիության համապատասխան կոմիտեների համաձայնությամբ, հաստատում են շրջանառության չափը այն խանութների, վորտեղ սելմագների, ռայմագների և այլ խանութների վարիչներն ազատվում են վաճառասեղանի անմիջական աշխատանքներից, ընդորում այդ շրջանառությունը չպետք ե ցածր լինի ամսական 75 հազ. ռուբլուց, իսկ կուլտմագների համար՝ ամսական 30 հազ. ռուբլուց։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Բացառիկ դեպքերում, վերևը նշված միությունների Նախագահությունները կարող են վորոշել մագազինների ազատ վարիչներ ունենալը նայև ամսական 75 հազ. ռուբլուց ցածր շրջանառություն ունենալու դեպքում։

13. Գյուղկոոպների (շրջկոոպների, քաղկոոպների բանկոոպների) և շրջկոոպմիությունների մագազինների այն վարիչները, վորոնք ազատված են վաճառասեղանի աշխատանքներից, ստանում են աշխատավարձի ամսական դրույքներ տվյալ մարզի, յերկրի, հանրապետության սպառկոոպերացիայի մագազինների վարիչների համար սա 1/I—39թ. գործող շկալայով:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. Նշված ամսական դրույքները վճարվում են վաճառողներին վարձատրելով հասանելիք աշխատավարձի ֆոնդից անկախ:

14. Վաճառասեղանի աշխատանքներից ազատված մագազինի վարիչների համար, սկսած 1939 թվից, սահմանել աշխատավարձի պարգև-հավելում, լավ աշխատանքի համար, հետևյալ հիմունքներով՝

ա) խանութի համար հաստատված յեռամսյակային ապրանքաշրջանառության պլանը կատարելու դեպքում, յեռամսյակի համար տրվում է պարգև-հավելում յեռամսյակի ամիսների դրույքների գումարի 20%-ի չափով, իսկ յեռամսյակային պլանի յուրաքանչյուր գերակատարված տոկոսի համար, յեռամսյակի աշխատավարձի պարգև-հավելում տրվում է ամսական դրույքի 2%-ի չափով.

բ) վատնումները յեվ հափշտակումները լիկվիդացիայի յենթարկելու պայքարում լուրջ հաջողությունների բացակայության դեպքում, պարգև-հավելման գումարը կրճատվում է կեսով չափ գյուղկոոպի մագազինների վարիչների համար՝ գյուղկոոպի վարչության ցուցումով, իսկ ռայմագների վարիչների համար՝ շրջկոոպմիության վարչության ցուցումներով.

գ) մագազինների առանձին վարիչները, յեթե նրանք իրենց անձնական աշխատանքով արժանի չեն խրախուսանքի, կարող են զրկվել պարգևից—գյուղկոոպների մագազինների վարիչները՝ փայատերերի ընդհանուր ժողովի կամ լիազորների ժողովի վորոշմամբ, ռայմագների վարիչները՝ շրջկոոպմիության վարչության վորոշմամբ.

դ) սույն համաձայնագրով սահմանված խրախուսիչ հավելումը տրվում է այն բանից հետո, յերբ գյուղկոոպի խանութի պլանի փաստացի գերակատարումը կհաստատվի փայատերերի ընդհանուր ժողովի կամ լիազորների ժողովի կողմից, իսկ ռայմագինը՝ շրջկոոպմիության վարչության կողմից:



15. Խանութների գանձապահների վարձատրումը կատարվում է ամսական դրույքներով—135, 150, 175 ռուբլի չափերով: Գանձապահների դրույքների կոնկրետ չափը սահմանում է համապատասխան կոոպերատիվ կազմակերպության վարչությունը՝ կախված աշխատողի ստաժից յեվ վորակից, համաձայնեցնելով պրոֆմիության շրջկոմների հետ:

16. Սահմանել, վոր ապրանքների մնացորդների ցուցակագրումը մագազիններում յեվ խանութներում կատարվում է հանգստի օրերին յեվ վոչ առևտրի ժամերին:

Ապրանքների մնացորդների ցուցակագրման աշխատանքների համար, աշխատանքի ժամերից դուրս յեվ հանգստի օրերին, խանութների վաճառողները, վորոնք հրավիրված են այդ աշխատանքները կատարելու համար, ստանում են լրացուցիչ վարձատրություն հետևյալ հիմունքներով՝ յուրաքանչյուր առաջին յերկու ժամվա արտաժամյա աշխատանքների համար մի ժամի միջին աշխատավարձի մեկ յեվ կեսի հաշվով յեվ հաջորդ ժամի արտաժամյա աշխատանքների համար՝ մեկ ժամվա միջին աշխատավարձի կրկնակի հաշվով:

Հանգստի օրերին ապրանքային մնացորդների ցուցակագրման աշխատանքների համար վաճառողներին տրվում է հանգիստ կամ վճարվում է յուրաքանչյուր ժամ աշխատանքի համար մի ժամվա միջին աշխատավարձի կրկնակի հաշվով:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Ժամի միջին աշխատավարձը հաշվվում է յելնելով մանրածախս շրջանառության համար վարձատրվելով վաճառողին վճարված աշխատավարձից:

17. Սահմանել, վոր խանութների յեվ մագազինների վարիչները աշխատանքի ժամերից դուրս յեվ հանգստի օրերին ապրանքների մնացորդները ցուցակագրելու և նմանապես նախատոնական առևտրի օրերին կատարած արտաժամյա աշխատանքների համար առանձին վարձատրություն չեն ստանում: Դրա փոխարեն նրանց համար սահմանված հերթական արձակուրդն ավելացվում է 6 բանվորական օրով, այն պայմանով, վոր արձակուրդի ընդհանուր տևողությունը չգերազանցի 24 բանվորական օրից:

18. Նախատոնական առևտրի կապակցությամբ կատարված արտաժամյա աշխատանքի համար, վաճառողները ստանում են վարձատրություն, բացի շրջանառության համար վարձամիավորով ստացած աշխատավարձից, յուրաքանչյուր առաջին յերկու ժամերի արտաժամյա աշխատանքների համար—մեկ ժամվա միջին աշխատավարձի կեսի հաշվով յեվ յուրաքանչյուր հաջորդ ժամերի արտաժամյա աշխատանքների համար՝ տվյալ ամսում շրջանառության համար վարձամիավորով վճարված աշխատավարձի, մեկ ժամվա միջին աշխատավարձի լրիվ չափով:

19. Տոն օրերի աշխատանքների համար մագազինների յեվ խանութների բոլոր աշխատողները վարձատրվում են հետևյալ կերպ.—

ա) գրամարկղ ունեցող մագազիններում տոնական օրերի շրջանառությունը վարձատրվում է կրկնակի վարձամիավորով, ընդվորում հանգստի օրերի աշխատանքի համար մեկ ժամվա աշխատավարձը չպետք է ավելի ցածր լինի քան տվյալ ամսվա շրջանառության համար ստացած մեկ ժամվա միջին աշխատավարձի կրկնակիից.

բ) գրամարկղ չունեցող մագազիններում յեվ խանութներում, աշխատողներին վճարվում է լրացուցիչ վարձատրություն, տոնական օրերի յուրաքանչյուր ժամվա աշխատանքի համար, տվյալ ամսվա շրջանառության համար վճարված վարձամիավորով՝ մեկ ժամվա միջին աշխատավարձի 100 %-ի հաշվով.

գ) ամսական դրույքներով վարձատրվող, վաճառասեղանի աշխատանքներից ազատված՝ մագազինների վարիչները, գանձապահները յեվ այլ աշխատողները, տոն օրերի աշխատանքների համար ստանում են վարձատրություն՝ համաձայն գոյություն ունեցող օրենսդրության:

## II. Մանր մանրածախսի աշխատողների վարձատրումը

20. Մինչև 15 հազ. ռուբ. միջին ամսական շրջանառություն ունեցող խանութների, կրպակների յեվ վրանների աշխատողները կարող են փոխադրվել տոկոսային վարձատրության, նրա մեջ մտցնելով առևտրական ծախսերը:

Այդ ձեռնարկների աշխատողներին տոկոսային վարձատրության փոխադրումը կատարվում է շրջանային, յերկրային յեվ



հանրապետական սպառկոոպմիությունների վորոշմամբ, սպառկոոպերացիայի աշխատողների արհմիության մարզային, յերկրային և հանրապետական կոմիտեների հետ համաձայնեցնելով:

21. Սահմանել, վոր տոկոսային վարձատրման փոխադրված առևտրական ձեռնարկների աշխատողները ստանում են աշխատավարձ ի հաշիվ այդ վարձատրության յեվ ծածկում են առևտրական հետևյալ ծախսերը.

ա) շենքի պահպանման (վառելիք, լուսավորություն, հատակի լվացում, մաքրության պահպանում).

բ) շենքի վարձ այն դեպքում, յեթե շենքը չի պատկանում գյուղկոոպին.

գ) ապրանքների բնական պակասորդը, գյուղկոոպի գլխավոր խանութից կամ պահեստից մինչև առևտրական ձեռնարկը ապրանքների տեղափոխման պահպանման յեվ մանրածախս վաճառքի ժամանակ.

դ) փաթեթման և դասավորման նյութերը.

յե) սանիտարական արտահագուստի արժեքը, նրա լվացումն ու կարկատումը և նմանապես անհատական գիգիենիայի ծախսերը (յերեսսրբիչ, օճառ).

զ) ապրանքների փոխադրավարձը գյուղկոոպի պահեստից կամ գլխավոր խանութից:

(Այն դեպքերում, յերբ մանր-մանրածախս ցանցի տոկոսային վարձատրությամբ աշխատողը չի կարող ինքը կատարել ապրանքների փոխադրությունը, փոխադրությունը կատարում է գյուղկոոպը համապատասխանորեն իջեցնելով տոկոսային վարձատրման չափը):

է) Առևտրական ձեռնարկի պահպանումը:

(Այն դեպքում, յերբ առևտրական ձեռնարկի պահպանությունն ապահովում է գյուղկոոպվարչությունը, պահակության ծախսերն աշխատողի տոկոսային վարձատրության մեջ չեն մտցվում:)

22. Սահմանել, վոր տոկոսային վարձատրության չափը վորոշվում է հանրապետական, մարզային և յերկրային սպառկոոպմիությունների կողմից, համաձայնեցնելով այն սպառկոոպերացիայի աշխատավորների արհմիության համապատասխան կոմիտեների հետ, այն հաշվով, վորպեսզի այդ խանութների, կրպակ-

ների և վրանների աշխատողների տոկոսային վարձատրումը լինի՝ եժան և դանդաղ շրջապտույտ ունեցող ապրանքների համար բարձր, քան թանգարժեք և արագ շրջապտույտ ունեցող ապրանքների համար։

Մանր-մանրածախ ցանցի աշխատողների աշխատավարձը մտցվում է սահմանված տոկոսային վարձատրության մեջ, սույն պայմանագրի համապատասխան կետերով նախատեսնված չափերով (տես 2, 4, 5, կետերը)։

23. Մարզային, յերկրային սպառկոոպմիությունների և սպառկոոպերացիայի աշխատավորների արհմիության մարզային և յերկրային կոմիտեների կողմից սահմանված տոկոսային վարձատրության չափերի հիման վրա, շրջկոոպմիությունները, սպառկոոպերացիայի աշխատողների արհմիության շրջկոմների հետ համաձայնեցնելուց հետո, կիրառում են տոկոսային վարձատրության չափ յուրաքանչյուր առևտրական ձեռնարկի համար։

24. Գյուղկոոպն իր հաշվին կատարում է ապահովագրական մուծումները (4,1 %) և պրոֆմիության կուլտ. աշխատանքների համար հատկացումները (1 %), յելնելով տոկոսային վարձատրությամբ նախատեսնված աշխատավարձի չափից։

Յեկամուտների գումարը և կուլտ գանձումները պահվում են աշխատողից, յելնելով այդ նույն աշխատավարձի չափից։

25. Խանութների, կրպակների և վրանների աշխատողներն ոգտվում են տարվա ընթացքում 12 բանվորական օրով հերթական արձակուրդ ստանալու իրավունքից։

Աշխատողի արձակուրդի ժամանակի աշխատավարձը սահմանվում է յելնելով ամսական միջին աշխատավարձից, հաշվարկված 12 ամսվա շրջանառության համար սահմանված վարձամիավորի չափով։

## III. Գյուղկոոպների, շրջկոոպների, քաղկոոպների յեվ բանկոոպների գրասենյակային աշխատողների վարձատրությունը

26. Գյուղկոոպների նախագահները վարձատրվում են կայուն դրույքներով հետևյալ չափերով.

Գյուղկոոպի միջին ամսական շրջանառության ժամանակ՝



| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Ամսական | մինչև | 10 հազ. ռուբլի | | | —100—120 ռ. |
| » | 10-ից | մինչև 15 | հազ. | ռուբլի | —120—140 ռ. |
| » | 15-ից | » 20 | » | » | —140—160 ռ. |
| » | 20-ից | » 25 | » | » | —160—180 ռ. |
| » | 25-ից | » 30 | » | » | —180—200 ռ. |
| » | 30-ից | » 50 | » | » | —250—ռուբլի |
| » | 50-ից | » 150 | » | » | —300— » |
| » | 150-ից | » 300 | » | » | —350— » |
| » | 300-ից բարձր | | » | » | —400— » |

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—1. Կայուն դրույքները նշված շկալայով սահմանվում են գյուղկոոպ նախագահների համար, յելնելով յեռամսյակային պլանի միջին ամսական շրջանառությունից, ներառյալ նաև հասարակական սննդի շրջանառությունը։

2. Շրջկոոպների և քաղկոոպների նախագահների ամսական դրույքները մնում են գոյություն ունեցող մակարդակի վրա։

27. Բանկոոպների նախագահների վարձատրությունը կատարվում է գործող տվյալ շկալայով.

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Մինչև 10 հազ. ռուբլի | | | . . . . | 125 | ռուբլի |
| 11-ից մինչև 15 հազ. ռուբլի | | | . . | 150 | » |
| 16-ից | » 20 | » | » . . . | 170 | » |
| 21-ից | » 25 | » | » . . . | 190 | » |
| 26-ից | » 30 | » | » . . . | 210 | » |
| 31-ից | » 40 | » | » . . . | 250 | » |
| 41-ից | » 50 | » | » . . . | 290 | » |
| 51-ից | » 75 | » | » . . . | 340 | » |
| 76-ից | » 100 | » | » . . . | 380 | » |
| 100 հազ. ռուբ. բարձր | | | . . . . | 400 | » |

28. Գյուղկոոպի հաշվա-գրասենյակային ապարատի համար սահմանել ներքոհիշյալ ամսական պաշտոնական դրույքները.

| | Գյուղկոոպի տարեկան մանրածախս շրջանառության դեպքում (շրջկոոպ, բանկոոպ) ներառյալ ռեստորանների, թեյարանների և ճաշարանների շրջանառ. | | | |
|---|---|---|---|---|
| | Մինչև 500 հ. ռ. | 500-ից մինչև մեկ միլիոն | 1 միլ. մինչև 2 » ռուբլի | 2 միլիոնից բարձր |
| Հաշվապահ . | 200—250 | 250 մինչև 300 | 275 մինչև 350 | 325—375 |
| Հաշվ. օգնական | — | — | 200 — 250 | 200—250 |
| Հաշվետար . | — | — | 150 — 175 | 150—175 |

Սույն կետում նշված պաշտոնական դրույքները բարձրացվում են՝

ա) 10 %-ով Բուրյաթ-Մոնղոլիայի, Կարելիայի և Կալմիկիայի Ավտոնոմ Սոցիալիստական Խորհրդային Հանրապետությունների, Պրիմորիայի և Խաբարովսկու երկրների, Չիտայի մարզի, Տաջիկստանի, Ուզբեկստանի, Ղազախստանի, Կիրգիզիայի և Թուրքմենիայի Խ. Ս. Հանրապետությունների համար։

բ) 30 %-ով այն վայրերի համար, որոնք՝ ՌԽՖՍՀ ԺԿԽ-ի 1932 թ. հոկտեմբերի 26-ի և 1934 թ. հունվարի 29-ի որոշումներով (Օրենքների ժողովածու, 1932 թ., № 91, հոդված 406 և 1934 թ., № 8, հոդվ. 49) դասվում են ծայրահեղ հյուսիսային շրջանների շարքում։

ԾԱՆՈԹՈՒԹ.—Այն դեպքերում, երբ աշխատողի փաստորեն ստացած պաշտոնական դրույքը բարձր է սույն պայմանագրով սահմանվածից, այդ աշխատողի համար պահպանվում է նրա ստացած փաստացի աշխատավարձի դրույքն այդ պաշտոնում և տվյալ կազմակերպությունում նրա աշխատանքի ամբողջ ժամանակամիջոցում։

29. Բոլոր խոշոր գյուղկոոպներում և շրջկոոպմիություններում մտցնել հաշվային աշակերտություն։

Աշակերտներին վճարումը կատարվում է կայուն ամսական դրույքներով հետևյալ չափերով. առաջին երեք ամիսը 60-ական ռուբլի, երկրորդ երկու ամիսը 80-ական ռուբլի և վերջին երկու ամիսը 100-ական ռուբլի։

Այն աշխատողին, որին ամրացված է աշակերտը պրակտիկ ուսուցման համար, վճարվում է ամսական 25 ռուբլի, իսկ



պրակտիկ ուսուցման ժամկետը վերջանալուց և աշակերտը քննություն տալուց հետո՝ 100 ռուբլի։

30. Սկսած 1939 թվից գյուղկոոպի, շրջկոոպի, բանկոոպի, քաղկոոպի վարչության նախագահի, գնորդի (տարածվար), հաշվապահի (հաշվետարի) լավ աշխատանքի համար սահմանել աշխատավարձի պարգև-հավելում հետևյալ հիմունքներով.

ա) մանրածախս ապրանքաշրջանառության հաստատված եռամսյա պլանը կատարելու դեպքում, յուրաքանչյուր եռամսյակի համար տրվում է պարգև-հավելում, ամսական դրույքների գումարի 20 %-ի չափով, եռամսյակային պլանի յուրաքանչյուր գերակատարված տոկոսի համար տրվում է եռամսյակի աշխատավարձի հավելում, ամսական դրույքի 2 %-ի չափով.

բ) վատնումները և հափշտակումները լիկվիդացիայի ենթարկելու պայքարում լուրջ հաջողությունների բացակայության դեպքում, պարգև-հավելման գումարը վերադաս կոոպկազմակերպությունների ցուցումով կրճատվում է կիսով չափ.

գ) փայատերերի ընդհանուր ժողովի կամ լիազորների ժողովների որոշմամբ, ղեկավար կազմի առանձին աշխատողները— գյուղկոոպների, շրջկոոպների, բանկոոպների և քաղկոոպների վարչությունների նախագահները, գնորդները (տարածվար), հաշվապահները, կարող են զրկվել պարգևից, եթե իրենց անձնական աշխատանքներով արժանի չեն խրախուսանքի.

դ) սույն համաձայնագրով սահմանված պարգև-հավելումը տրվում է այն բանից հետո, երբ պլանի գերակատարման փաստը կը հաստատվի փայատերերի ընդհանուր ժողովի կամ լիազորների ժողովի կողմից։

31. Սահմանել եռամսյակային պարգևատրում գյուղկոոպի (շրջկոոպի, բանկոոպի, քաղկոոպի) գրասենյակի մնացած աշխատողներին և սպասարկող պերսոնալին լավ աշխատանքների համար։

Գյուղկոոպի (շրջկոոպի, բանկոոպի, քաղկոոպի) վարչության վերևում նշված աշխատողներին պարգևատրելու համար առանձնացվում է գումար գյուղկոոպի (շրջկոոպի, քաղկոոպի, բանկոոպի) վարչության ղեկավար աշխատողներին և մագազինների վարիչներին հասանելիք պարգև-հավելման գումարի 40 %-ի հավասար։

*Աշխատողների պարգևատրումը կատարվում է գյուղկոոպի (շրջկոոպի, քաղկոոպի, բանկոոպի) վարչության վորոշմամբ, համաձայնեցրված սպառկոոպերացիայի աշխատավորների արհմիության տեղական կոմիտեների հետ:*

*32. Գյուղկոոպի աշխատողների աշխատանքի վարձատրումը մթերման գործունեության համար կարգավորվում է առանձին տարիֆային համաձայնարով:*

*33. Աշխատողների աշխատավարձը վճարվում է ամիսը յերկու անգամ: Տարիֆային դրույքներով վճարվող աշխատողներին ամսվա առաջին կեսի համար վճարվում է կանխավճար (ավանս), ամսվա դրույքի 50 %-ի չափով:*

*Միանական վարձամիավորով վարձատրվող աշխատողներին ամսվա առաջին կեսի համար վճարվում է կանխավճար (ավանս), յելնելով փաստացի շրջանառությունից, բազմապատկած հիմնական վարձամիավորով:*

*Շերտավորված (դիֆերենցիալ) վարձամիավորով վարձատրվող աշխատողներին ամսվա առաջին կեսի համար վճարվում է կանխավճար (ավանս), անցյալ ամսվա շրջանառության համար հաշվարկած աշխատավարձի 50 %-ի չափով:*

*Ամսվա աշխատավարձի հաշվարկումը բոլոր աշխատողների հետ կատարվում է հաջորդ ամսի 7-ից վոչ ուշ:*

*34. Սույն համաձայնագրով, վոր ուժի մեջ է մտնում 1939 թ. փետրվարի մեկից, վերացվում են գյուղկոոպների, բանկոոպների, շրջկոոպների, քաղկոոպների յեվ շրջկոոպմիության մանրածախի առևտրական աշխատողների աշխատանքի վարձատրման մասին նախկինում գործող բոլոր համաձայնագրերը յեվ վորոշումները:*

*Սույն համաձայնագրով սահմանված խրախուսիչ հավելումները վճարվում են սկսած 1939 թ. առաջին յեռամսյակից:*

**ԽՍՀՄ-ի ՅԵՎ ՌՍՖՍՀ-ի Ցենտրոսոյուզի Նախագահություն**

**Կենտրոնի, Ուկրաինայի, Կովկասի, Արեվելքի, Սիբիրի յեվ Ուրալի Սպառկոոպերացիայի աշխատողների Արհմիությունների Կենտրոնական Կոմիտեներ;**



## ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ, ՅԵՐԿՐԱՅԻՆ ՅԵՎ ՄԱՐԶԱՅԻՆ ՍՊԱՌԿՈՈՊՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ, ՍՊԱՌԿՈՈՊԵՐԱՑԻԱՅԻ ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԱՐՀՄԻՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ, ՅԵՐԿՐԱՅԻՆ ՅԵՎ ՄԱՐԶԱՅԻՆ ԿՈՄԻՏԵՆԵՐԻՆ

*Ցենտրոսոյուզը և Սպառկոոպերացիայի աշխատավորների Արհմիության Կենտրոնական Կոմիտեները վերանայեցին Սպառկոոպերացիայի առևտրական աշխատողների աշխատանքի վարձատրման մասին մինչև 1939 թ. փետրվարի մեկը գործող տարիֆային համաձայնագրերը: Ներկայումս ստորագրված է մանրածախ ողակների առևտրական աշխատողների վարձատրության մասին տարիֆային համաձայնագիր (տես համաձայնագիրը էջ 3):*

*Մեծաքանակ բազաների և պահեստների աշխատողների աշխատանքի վարձատրության մասին տարիֆային համաձայնագիրը կուղարկվի լրացուցիչ:*

*Առաջարկում ենք ընդունել ի ղեկավարություն և կատարումն հետևյալ ցուցումները:*

*1. Սույնին կցված տարիֆային համաձայնագիրը Ձեր կողմից պետք է անհապաղ իջեցվի շրջկոոպմիություններին, շրջկոոպներին, գյուղկոոպներին, քաղկոոպներին, բանկոոպներին և պրոֆմիության համապատասխան մարմիններին:*

*Ցենտրոսոյուզի և արհմիության Կենտրոնական Կոմիտեների միջև կնքված տարիֆային համաձայնագրում վորևե փոփոխություն մացնել կամ թե վորևե տեղական համաձայնագիր կնքել չի թույլատրվում:*

*Տարիֆային համաձայնգրով նախատեսնված վարձատրության կարգը և չափերը տարածվում են՝ սպառկոոպերացիայի*

ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ

մանրածախի բոլոր աշխատողների վրա, այդ թվում՝ 1938 թվին Սպառկոոպերացիային հանձնված Պետ առևտրի նախկին ցանցի աշխատողների, ինչպես նախկին սովխոզսեկցիայի մանրածախի աշխատողների վրա։

2. Անհրաժեշտ է տարածել մանր խանութների, կրպակների և վրանների փոխադրումն աշխատանքի տոկոսային վարձատրության և աշխատանքային պայմանագրերի կնքումն այդ մանր ձեռնարկների աշխատողների հետ։ Դա ավելի անհրաժեշտ է նրա համար, որ նոր տարիֆային համաձայնագրով չի նախատեսված վաճառողների համար որևէ ապահովված դրույքներ։ Մանր-մանրածախ ցանցի աշխատողները՝ մինչև աշխատանքի տոկոսային վարձատրության փոխադրումը, պետք է վարձատրվեն ընդհանուր հիմունքներով, մանրածախ ցանցի համար սահմանված նոր տարիֆային համաձայնագրով։

Առաջներում տոկոսային վարձատրության փոխադրված, մանր-մանրածախ ցանցում, ժամանակավորապես պահպանվում են այդ ցանցի աշխատողների հետ կնքված աշխատանքային պայմանագրերում նախապես նշված վարձատրության պայմանները։ Մեկ ամսյա ժամկետում, ներկա տարիֆային համաձայնագրի համապատասխան, պետք է վերակնքվեն աշխատանքային պայմանագրերը։

3. Տարիֆային համաձայնագրերը ստորին կազմակերպություններին իջեցնելու հետ միաժամանակ, Ձեզ անհրաժեշտ է հաստատել այն խանութների ցուցակը, որտեղ սահմանվում է վաճառողների վարձատրության շերտավորված (դիֆերենցիալ) վարձաչափավորով։ Ցուցակներում մտցվում են հատուկ բաժիններ և բաժիններին հատուկ ամրացված աշխատողներ ունեցող մագազինները։ Ցուցակներում կարող են մտցվել նաև ազատ վարիչներ չունեցող մագազինները։ Սակայն, ազատ վարիչներ ունեցող խոշոր մագազինները չպետք է դուրս մնան ցուցակից։ Ցուցակներում պետք է մտցվեն բոլոր կուլտմագները, որոնցում գրքերի և խաղալիքների առևտուրը անպայման յենթակա է առանձնացման։

4. Մասնագիտացված մագազինների աշխատողները, որոնք վաճառում են որոշ խմբի ապրանքներ, վարձատրվում են համապատասխան շերտավորված (դիֆերենցիալ) վարձաչափավորներով՝ բարձրացնելով այդ վարձաչափավորները 20 %-ով պլանից ավել շրջանառության համար։ Այսպես օրինակ, գալանտերեա-պարֆյումերիայի մագազինի աշխատողները վարձատրվում են հազարից 18 ռ. վարձաչափավորով, գրախանութի աշխատողները հազարից 35 ռ. վարձաչափավորով։

5. Միասնական վարձավճարով խանութներում և մագազիններում կիրառվում է կոլեկտիվ վարձատրում, այսինքն, ըստ վարձաչափավորի, ամբողջ աշխատավարձի գումարը բաժանվում է, տարիֆային համաձայնագրում ցույց տված յեղանակով, խանութի (մագազինի) վարիչի և բոլոր վաճառողների մեջ։ Շերտավորված (դիֆերենցիալ) վարձաչափավորով վարձատրվող մագազիններում, ազատ վարիչ լինելու դեպքում, կիրառվում է բրիգադային վարձատրություն, այսինքն յուրաքանչյուր բաժնի վարձաչափավորով աշխատավարձը, բաժանվում է տվյալ բաժնի աշխատողների մեջ։

ԾԱՆՈԹՈՒԹ.—Շերտավորված (դիֆերենցիալ) վարձաչափավորով մագազիններում, ազատ վարիչ չունենալու դեպքում, թույլատրվում է ինչպես կոլեկտիվ, այնպես և բրիգադային վարձատրում տեղում, յուրաքանչյուր դեպքում կոոպերատիվի և պրոֆմիության կազմակերպությունների համաձայնությամբ։

6. Վաճառասեղանի աշխատանքներից ազատված մագազինների վարիչների համար սահմանվում են ամսական դրույքներ, յելնելով առ մեկն հունվարի 1939թ. գործող շկալայով նախատեսնըված ապրանքաշրջանառության չափից։

7. Բանկոոպների նախագահների համար տարիֆային համաձայնագրի 27-րդ կետում նշած դրույքների շկալան վերաբերվում է նախկին սովխոզսեկցիայի սովխոզբանկոոպներին։ Շրջկոոպմիություններում առաջներում միավորված այն բանկոոպները, որոնք միշտ օգտագործել են գյուղկոոպների նախագահների համար սահմանված շկալան, հետագայում ևս պետք է օգտվեն այդ վերջիններից։

8. Տարիֆային համաձայնագրում չթվարկված աշխատողների (դնորդ, ոժանդակ պահեստների վարիչներ) համար հաս-

տասվում են այն ամսական դրույքները, վորոնք փաստորեն վճարվում եյին 1939 թ. հունվարին:

9. Աշխատավարձի հաշվարկումների ընթացքում սխալներից խուսափելու համար բերում ենք հաշվարկումների տեխնիկայի հետեվյալ օրինակները.

ՈՐԻՆԱԿ 1-ին. Շերտավորված (դիֆերենցիալ) վարձամիավորներով մագազինի առանձին բաժիններում պլանի գերակատարման ընթացքում աշխատավարձի հաշվարկումը (տարիֆային համաձայնագրի 6-րդ կետ բ ենթակետ).

Մագազինի բաժնի համար ըստ յեռամսյակային շրջանառության սահմանված է միջին ամսական շրջանառության պլան 40 հազ. ռուբլի, փաստացի շրջանառությունը կազմել է 44 հազ. ռուբլի; այդ թվում ըստ գալանտերեյայի՝ 15 հազ. ռուբլի, տրիկոտաժի՝ 16 հազ. ռուբլի, կոշկեղենի՝ 13 հազ. ռուբլի:

Վորպեսզի բաժնի աշխատողների աշխատավարձը հաշվարկվի ամբողջ բաժնի պլանից ավել շրջանառության համար բարձրացված վարձամիավորով, անհրաժեշտ է.

ա) Բազմապատկել առանձին ապրանքային խմբերի փաստացի շրջանառությունը համապատասխան վարձամիավորով, վոր կտա ամբողջ բաժնի աշխատավարձի ընդհանուր գումարն ըստ հիմնական վարձամիավորի:

| | Փաստացի շրջանառություն | Վարձամիավորը | Աշխատավարձի գումարը |
|---|---|---|---|
| Գալանտերեյա . . . . . . . | 15 հ. ռ. | 18.00 | 270 ռ. |
| Տրիկոտաժ . . . . . . . . | 16 հ. ռ. | 4.50 | 72 ռ. |
| Կոշկեղեն . . . . . . . . . | 13 հ. ռ. | 6.00 | 78 ռ. |
| Ընդամենը | 44 հ. ռ. | — | 420 ռ. |

բ) Բաժնի ամբողջ աշխատավարձի գումարը (420 ռ.) բաժանել բաժնի փաստացի ամբողջ շրջանառության (44 հ. ռ.) վրա, վոր կտա տվյալ բաժնի միջին վարձամիավորը:



420 : 44=9 ռ. 50 կ. (կլորացրած)

գ) Վարձամիավորի բարձրացված մասը վորոշելու համար անհրաժեշտ է՝ գտնել բաժնի վերեվում հիշատակված միջին վարձամիավորի 20%-ը:

$$\frac{9\text{ ռ. }50\text{ կ.}\times 20}{100}=1\text{ ռ. }90\text{ կ.}$$

դ) Պլանից ավել շրջանառությունը (4 հ. ռ.) բազմապատկվում է բարձրացված վարձամիավորի (1 ռ. 90 կ.) մասով, վոր կտա բաժնի աշխատողներին հասանելիք աշխատավարձի գումարը, պլանից ավել շրջանառության համար ըստ բարձրացված վարձամիավորի:

1. ռուբլի 90 կ. × 4=7 ռուբլի 60 կ.

2-ՐԴ ՈՐԻՆԱԿ. Աշխատավարձի բաշխումը տարբեր քանակի օրեր աշխատած աշխատողների մեջ:

Մագազինում տվյալ ամսում աշխատել են. վարիչը՝ 25 օր, առաջին կարգի վաճառողը՝ 15 օր յեվ 2-րդ կարգի վաճառողը՝ 20 օր: Ամսական 600 ռ. կազմող աշխատավարձի ընդհանուր գումարը պետք է բաժանվի նշված աշխատողների մեջ հետեվյալ կարգով.

ա) Հաշվի առնելով յուրաքանչյուր աշխատողի աշխատած օրերը, վորոշվում է վերահաշվարկված մասերի ընդհանուր քանակը: Վարիչի համար սահմանված 1,7 մասը բազմապատկվում է փաստորեն աշխատած 25 օրով, վորը կկազմի 42,5 մաս.

Առաջին կարգի վաճառողի համար սահմանված 1,7 մասը բազմապատկվում է փաստորեն աշխատած 15 օրով, վորը կկազմի 25,5 մաս.

Յերկրորդ կարգի վաճառողի համար սահմանված 1,3 մասը բազմապատկվում է փաստորեն աշխատած 20 օրերով, վորը կկազմի 26 մաս:

Այսպիսով վերահաշվարկած մասերի ընդհանուր քանակը կկազմի 94 (42,5 + 25,5 + 26):

բ) Ապա վորոշվում է, թե ինչքան է ընկնում մեկ մասի վրա, դրա համար աշխատավարձի ընդհանուր գումարը (600 ռ.) բաժանվում է ընդհանուր մասերի քանակի (94) վրա, վոր կկազմի 6 ռ. 40 կ.:

գ) Դրանից հետո վորոշվում է յուրաքանչյուր աշխատողի աշխատավարձը: Դրա համար աշխատավարձի գումարը, վոր

ընկնում ե մեկ մասի վրա, բազմապատկվում ե առանձին-առանձին յուրաքանչյուր աշխատողի վերահաշվարկած մասերի քանակով. վերջին հաշվով աշխատավարձը կարտահայտվի՝

վարիչին՝ 6 ռ. 40 կ. ×42, 5=271 ռ.

1-ին կարգի վաճառողին՝ 6 ռ. 40 կ.×25,5=163 ռ.

2-րդ կարգի » 6 ռ. 40 կ.×26 = 166 ռ.

10. Տեղերում տարիֆային համաձայնագրերը ստանալուց հետո, պետք ե կատարվի աշխատավարձի վերահաշվարկ փետրվար ամսվա համար։

Հրավիրում ենք ձեր ուշադրությունը նոր տարիֆային համաձայնագրերը կյանքում անցկացնելու աշխատանքների լըրջության յեվ պատասխանատվության վրա։ Ապահովեցեք հարկ յեղած հրահանգավորում յեվ կոնկրետ կենդանի ոգնություն ստորին կազմակերպություններին։ Այդ նպատակի համար անհրաժեշտ ե մոբիլիզացիայի յենթարկել սպառմիության ամբողջ հրահանգչական ապարատը յեվ պրոֆմիության աշխատողներին։

Անհրաժեշտ ե շտապ կարգով անցկացնել շրջմիությունների հրահանգիչների, պլանավիկների յեվ պրոֆմիության շըրջկոմների մարզային խորհրդակցություններ, յուրացնելու աշխատանքի վարձատրության նոր կարգը յեվ աշխատավարձի ճիշտ հաշվարկման տեխնիկան։

Նման հրահանգչական խորհրդակցություններ պետք ե անցկացնել շրջաններում՝ գյուղկոոպների հաշվապահների հետ։ Անհրաժեշտ ե նմանապես լայնորեն բացատրել վարձատրության կարգը՝ խանութների յեվ մագազինների աշխատողների ընդհանուր ժողովներում։ Սպառկոոպմիությունները պետք ե ակտիվ մասնակցություն ունենան այդ նպատակի համար պրոֆմիությունների կողմից հրավիրվող խորհրդակցություններին։

Հատուկ ուշադրություն պետք ե դարձվի խոշոր մագազինների յեվ աշխատողների ճիշտ դասավորման վրա, վորտեղ վարձատրությունը պետք ե կիրառվի շերտավորված (դիֆերենցիալ) վարձամիավորով։

Առանց կոնկրետ յուրաքանչյուր մագազինում աշխատանքների մանրազնին յեվ մտածված նախապատրաստման, նոր վարձամիավորների մեխանիկորեն անցկացնելը կարող ե շատ



դեպքերում առաջ բերել աշխատավարձի զգալի իջեցում՝ վորոշ բաժիններում յեվ աշխատավարձի խիստ բարձրացում ուրիշ բաժիններում։

Ապահովեք հսկողությունը շրջկոոպմիությունների յեվ գյուղկոոպների աշխատանքների ընթացքի վրա յեվ Ձեր հերթին ժամանակին ինֆորմացիա ներկայացրեք Ցենտրոսոյուզին և պրոֆմիության կենտկոմին։

ԽՍՀՄ ՅԵՎ ՌԽՖՍՀ Ցենտրոսոյուզի նախագահություն

Կենտրոնի, Ուկրայինայի, Կովկասի, Արեվելքի, Սիբիրի յեվ Ուրալի Սպառկոոպերացիայի աշխատավորների Արհմիության Կենտրոնական Կոմիտեներ

Մոսկվա 10 մարտի 1939 թ.

Ցենտրոսոյուզ (նախագահություն) յելից №—0592

3 MAR. 1959
221
գն
11
28357
ՀՀ Ազգային գրադարան
NL0927955